



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՊԱՏՄԱԿԱՆ ՌԵԼԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1965 թվականի հուլիսի 3-ին, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածին էր վերադառնում արտասահման կատարած իր վեցերորդ ուղևորությունից:

Նորին Ս. Օծությունն այս ճանապարհորդության ժամանակ Բուլղարիա և Ռումինիա էր այցելել, սրտագին և եղբայրական հրավերներով Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պետ Ամենապատիվ Տ. Կիրիլ և Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պետ Ամենապատիվ Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքների:

Հայ Եկեղեցու պատմության մեջ, առաջին անգամ էր, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն էր տալիս Բուլղար և Ռումեն օրթոդոքս եկեղեցիներին, հոգևորականության և հավատացյալներին:

Այս այցելությունը նշանակալից է մանավանդ մեր օրերին, երբ քրիստոնյա եկեղեցիները, արդի կյանքի մեծ հրամալականի առաջ, դուրս են եկել իրենց մեկուսացումից, մոտենում են միմյանց, փորձում են լեզու գտնել, միասին աղոթել և աշխատել հավաքական ճիգերով, հկումենիկ ոգով, հանուն աշխարհի խաղաղության, ժողովուրդների եղբայրության:

Մեր օրերում և արդի եկեղեցական կյանքի պայմաններում, միջեկեղեցական եման հանդիպումներ և շփումներ օգտակար և անհրաժեշտ են եկեղեցիների միջև իրար հասկացողության, համագործակցության, եղբայրության և սիրո մթնոլորտ ստեղծելու համար:

Այս մտածումների լույսի տակ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Բուլղարիա և Ռումինիա, սրտագին առիթ էր ստեղծում

ծում մի նոր և ավելի բարձր աստիճանի բարձրացնելու Բուլղար, Ռումեն և Հայ եկեղեցիների եղբայրական բարեկամությունը:

Երկու սրբազան պատրիարքների սրտագին ողջագուրումները Հայոց Հայրապետի հետ, կատարված պաշտոնական ընդունելությունները, միջեկեղեցական կրույցները, հավատացյալների խանդավառությունը, ուխտագնացություններ դեպի վանքերն ու թեմերը, բուլղար, ռումեն և հայ եկեղեցիներում կատարված հանդիսություններն ու փոխանակված անկեղծ արտահայտությունները պայծառ և հուզիչ ապացույցներն էին քրիստոնեական եղբայրության այս նոր տիպի բարեկամության:

Հուլիսի, պատմական և անմոռանալի եղան ռումեն, բուլղար և հայ եկեղեցական պետերի ողջագուրումները: Նրանց եղբայրական համբույրը մի անգամ ևս նվիրագործեց այս երեք ժողովուրդների և եկեղեցիների սիրո և բարեկամության դարավոր կապերը:

Հանձին երեք եկեղեցիների պետերի, երեք ժողովուրդներն էին ողջագուրվում և եղբայրանում:

Պաշտոնական առիթներով եկեղեցիներում և սեղանների շուրջ արտասանված ճառերը, ելույթները, խանդավառ ու ջերմ մթնոլորտում, վերածվեցին կրոնական եղբայրության սրբազան տոնի և դաշինքի:

1958 թվականի նոյեմբերին, Ամենապատիվ Տ. Ժուստինիան և Ամենապատիվ Տ. Կիրիլ պատրիարքների այցելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, սրտագին հրավերներով Հայոց Հայրապետի, նպաստել էր սիրալիր կապերի սերտացմանը երեք եկեղեցիների միջև:

Առաջին անգամն էր, որ Բուլղար և Ռումեն Օրթոդոքս եկեղեցիների սրբազան գահակալները, Ս. Էջմիածնի կամարների տակ և աստվածաշնչական Արարատի նայվածքի ներքո, ողջագուրվում էին, մի նոր և խոստումնալից էջբացելով եկեղեցական տարեգրության պատմության մեջ:

«Էջմիածնում մենք պգացինք Հայաստանի քրիստոնեական հին ավանդության մեծությունը», — հաստատում էր Ամենապատիվ Ս. Կիրիլ Պատրիարքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Բուլղարիա և Ռումինիա կատարած ուղևորությունը մնում է պատմական և նշանակալից:

Հունիսի 9-ին, Սոֆիայի Ս. Ալեքսանդր Նևսկու հռչակավոր և պատմական տաճարում, Ամենապատիվ Ս. Կիրիլ Պատրիարքը, ողջունելով Հայոց Հայրապետի ներկայությունը, նշում էր. «Ձեր եղբայրական այցելությունը մեզ համար ամենաերջանիկ մի իրողություն է և ներկայացնում է իրական մի էկումենիկ տոն, այնքան սրտամոտ մեր երկու եկեղեցիների հաճար»:

Վեհափառ Հայրապետի պատմական այցելությունը Բուլղարիա և Ռումինիա, միաժամանակ հանդիսացավ առիթը Հայ Եկեղեցու, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, նրա Գահակալի և հայ հավատացյալ ժողովրդի հանդեպ անվերապահ հարգանքի, սիրո ցույցերի, արտահայտությունների:

«Մեր հարգանքը Հայոց Ս. Եկեղեցու հանդեպ, — նշում էին սրբազան պատրիարքները և Սինդոքի անդամները, — միշտ եղել է շատ մեծ, նրա քրիստոնեական փառապանծ ավանդությունների համար...», իսկ Հայ Եկեղեցու աշխարհայնորդ Հայրապետը «քրիստոնյա աշխարհի առաջ նորից է հայտնաբերել Էջմիածնի հոգևոր փառքը»: Հայոց Հայրապետի անձնավորությունը, շուքն ու օծությունը, ոգեշունչ քարոզներն ու ելույթները վառ, անմոռանալի տպավորություն են թողել ամենուրեք, եկեղեցական պետերի, հոգևորականության, պետական շրջանակների և հավատացյալների վրա, որպես կենդանի և սրտառու մարմնացումը հայ հավատի և կենսունակության:

Նորին Ս. Օծությունը, իր բոլոր արտահայտությունների և ելույթների մեջ, վկայեց իր ջերմ սիրո և երախտագիտության մասին դեպի բուլղար և ռումեն հայրենիքները, ժողովուրդները, Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիները, դեպի նրանց սրբազան գահակալները, հոգևորականությունը և հավատացյալ ժողովուրդը, դեպի նրանց կազմակերպած հոգևոր, եկեղեցական և վանական կյանքը:

Հայոց Հայրապետը, Բուլղարիայում և Ռումինիայում գտնված օրերին, հանդիպումներ է

ունենում Սոֆիայում և Բուխարեստում սրբազան պատրիարքների, Ս. Սինդոքի անդամների և բարձրաստիճան հոգևորականության հետ: Ստեղծված եղբայրական, քրիստոնեական մաքուր մթնոլորտում, երեք եկեղեցիների պետերն ու պատվիրականաց անդամները կարծիքներ են փոխանակում ավետարանական ոգով եկեղեցիների մերժեցման, համագործակցության, աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության հարցերի շուրջ:

Լիակատար համաձայնություն է գոյանում այն մասին, որ «առհրաժեշտ է առավել ջանքեր ի գործ դնել, կենսագործելու համար Աստուծո կամքը, ի խնդիր ի Զրիստոս եղբայրության հավատացյալների, ի խնդիր ժողովուրդների առավել միասնության, փոխադարձ համախոհության ոգով և եղբայրության, ինչպես նաև ջերմաշին աղոթքներով և գործնական ճիգերով աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման համար»:

Հայոց Հայրապետի սույն պատմական այցելությունը Ռումեն և Բուլղար Օրթոդոքս եկեղեցիների կողմից գլխավորվեց որպես «մի նոր և կարևոր նպաստ քրիստոնեական էկումենիզմի օգտին», Բուլղար, Ռումեն և Հայ «եկեղեցիների հարաբերությունների» խորացման և մեր ժողովուրդների ավանդական կապերի սերտացման» տեսակետից:

Հովվապետական սույն վեցերորդ ուղևորության ծրագրում նախատեսվել էր անշուշտ բուլղարահայ և ռումինահայ ազգային-եկեղեցական իշխանության թեմական խորհուրդների և հավատացյալների սրտագին հրավերներով, Վեհափառ Հայրապետի այցելությունը վերոհիշյալ երկու միացյալ թեմերի եկեղեցիներն ու վանքերը, անձամբ տանելու այդ հյուրընկալ երկինքների տակ ապրող հայ ժողովրդի հարապատ բեկորներին կենարար ողջույն և օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և մեր վերածնված Մայր Հողից:

Հայոց Հայրապետը, Բուլղարիայում և Ռումինիայում, իր հավատացյալ և հայրենակարոտ զավակների կողմից արժանանում է սրտագին և փառաշուք ընդունելության:

Ինչպես նախորդ հայրապետական ուղևորությունները, վեցերորդն էլ հանդիսանում էր նույնքան պատմական և իմաստալից իրադարձություն, մեր արդի ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, նրանով մանավանդ, որ Նորին Ս. Օծությունը ծնվել և ապրել էր ռումինական հողի վրա, գործել երկար տարիներ որպես ուսուցիչ, ազգային-հասարակական գործիչ և 1943—1955 տարիներին՝ որպես առաջնորդ Ռումինիայի հայոց թեմի, իսկ 1954 թվականից՝ նաև որպես Բուլղարիայի հայոց առաջնորդ:

Տոնական խանդավառության օրեր ապրեցին բուլղարահայ և ռումինահայ երկու թեմերը:

Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական համայնքներին տրված հովվապետական նման այցելություններ օրհնություն և բարիք միայն կարող են բերել:

Բուլղարական և ռումինական հյուրընկալ հողերի վրա հայ գաղութի հաստատման պատմությունը շատ հին է:

Ռումեն, բուլղար և հայ ժողովուրդներն անցյալում պատմական նույն դժնդակ պայմանների մեջ են ապրել: Հասարակաց այդ ճակատագրից է, որ շխարհ են եկել նույն բաղձանքներն ու անկեղծ, փոխադարձ համակրանք, սեր և հարգանք:

Շատ հին ժամանակներից, հայրենիքից հալածական, փախստական հայեր ջերմ, եղբայրական ասպնջականություն են գտել բուլղար և ռումեն հողերի վրա, հաստատվել այնտեղ, տուն ու տեղ կազմել, եկեղեցի, դպրոց հիմնել և ապրել վաղվա հույսով և հավատով:

1915 թվականի մեծ եղեռնից հետո, մանավանդ Բուլղարիան և Ռումինիան, լայնորեն բացել են իրենց հյուրընկալ դռները և սրտերը, սիրով ընդունելու հայ նոր գաղթականությանը:

Այժմ Բուլղարիայում հայությունը խմբվել է Սոֆիա, Պլովդիվ, Վառնա և այլ քաղաքներում: Գործում են 11 հայկական եկեղեցիներ: Ռումինիայում հայությունը ապրում է Բուխարեստում և Կոնստանցայում: Երկու թեմերն էլ կազմակերպական տեսակետից գտնվում են օրինակելի բարձրության վրա: Թեմերի ազգային-եկեղեցական կյանքը իր ամբողջության մեջ դրվել է ամուր, առողջ, եկեղեցասիրական և հայրենասիրական հիմքերի վրա, շնորհիվ թեմակալ առաջնորդի, թեմական, եկեղեցական խորհուրդների, հոգևորականության, հայրենակցական, մշակութային մարմինների համերաշխ, գիտակից և ողջամիտ համագործակցությամբ:

Թեմերից յուրաքանչյուրն ունի իր առանձին կազմակերպությունը և իր անդուլ ջանքերի շնորհիվ, նախախնամական դեր է կատարում մանավանդ նոր սերունդը հայ պահելու և մեր նախնիքների լուսավոր ճանապարհով, ավանդությունների շնչով, հավատով դաստիարակելու պատասխանատու գործում:

Յրկու թեմերն էլ միշտ կանոնավոր հարաբերության մեջ են եղել Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռի հետ:

Ավանդություն դարձած սրտագին և ջերմ հարաբերություններ շարունակվում են պահպանվել Ռումեն, Բուլղար և Հայ եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների միջև:

Ահա այսպիսի կազմակերպված, հայկական շնչով և ավանդություններով տոգորված մի տիպար գաղութի և թեմի հովվապետական այցելություն է տալիս նախկին առաջնորդ՝ ազգիս Վեհափառ Հայրապետը:

Եվ պատահականություն չէր, որ ողջ հայ գաղութը Բուլղարիայի և Ռումինիայի, հուլուսով, արցունքով և երախտագիտությամբ էր ընդունում Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը:

Սույն օրհնաբեր այցով է՛լ ավելի խորացան բուլղարահայերի և ռումինահայերի սերն ու հավատարմությունը դեպի հայ ժողովրդի լուստ խորան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեպի նրա արժանավոր Գահակալը, և ջերմացան հայրենակարոտ սրտերը հայրենիքի արևով:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության հիմնական նպատակն է Հայ եկեղեցու պայծառությունը, մեր ժողովրդի բարօրությունը և մեր վերածնված Մայր Հայրենիքի ծաղկումն ու բարգավաճումը:

Հովվապետական նման բարեբաստիկ այցով, ողջ հայությունը կապրի Ս. Էջմիածնի հավերժական օրհնության ներքո, Մայր Հայրենիքով և Մայր Հայրենիքի համար:

